

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/5

15 նոյեմբերի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Արման Մարզեցյանի գանգատը սխալմամբ ՀԴՄ մուտքագրված գումարն իրաշման շրջանառության կազմում չընդգրկելու վերաբերյալ:

Ա/Ձ Արման Մարզեցյանի գանգատում բերված փաստարկները.

Ա/Ձ Արման Մարզեցյանը հայտնում է, որ Շիրակի մարզի Մեղրաշեն գյուղում 2014թ-ից զբաղվում է սննդի մանրածախ առևտրով: Նշված հասցեում տեղադրված ՀԴՄ-ն ունեցել է անսարքություններ, ինչը վերանորոգելուց հետո պարզվել է, որ 16.01.2016թ. խփվել է 40.002.098 դրամ:

Ա/Ձ Արման Մարզեցյանը հայտնում է նաև, որ 2014թ-ին իրացման շրջանառությունը կազմել է 4.300.000 դրամ, 2015թ-ին՝ 4.217.340 դրամ, 2016թ. առաջին կիսամյակում՝ 2.950.000 դրամ:

Հարկային տեսչությունում իրեն տեղեկացրել են, որ դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարի գրանցման դեպքում, պետք է դեպքը տեղի ունենալուց հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ հարկային տեսչություն ներկայացնել համապատասխան տեղեկանք: Սակայն, քանի որ նշված փաստի վերաբերյալ իմացել է միայն ամիսներ անց, ուստի բաց թողել վերոգրյալ տեղեկանքը ներկայացնելու ժամկետը:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արման Մարզեցյանը խնդրում է սխալմամբ ՀԴՄ մուտքագրված 40.002.098 դրամ չընդգրկել իրաշման շրջանառության կազմում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Արման Մարզեցյանը Շիրակի մարզի Մեղրաշեն գյուղում 2014թ-ից զբաղվում է սննդի մանրածախ առևտրով: Նշված հասցեում տեղադրված ՀԴՄ-ի հետ կապված ի հայտ են եկել անսարքություններ, որոնք վերանորոգելուց հետո պարզվել է, որ 16.01.2016թ.-ին Ա/Ձ Արման Մարզեցյանի կողմից սխալմամբ ՀԴՄ է մուտքագրվել 40.002.098 դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.03.2015թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում, եթե սխալը հայտնաբերվել է գնման կտրոնի փակումից հետո մինչև օրվա (հերթափոխի) հաշվետվության դուրսբերումը, ապա սխալ գրանցումից անմիջապես հետո սխալ գումարով տպված կտրոնի հիման վրա լրացվում է գումարների՝ սխալմամբ գրանցման ակտը՝ համաձայն N 6 ձևի, և ՀԴՄ-ի միջոցով կատարվում է վերադարձ՝ տպվելով վերադարձի կտրոն: Այն դեպքում, երբ սխալը հայտնաբերվել է օրվա

(հերթափոխի) հաշվետվության դուրսբերումից հետո, լրացվում է սխալմամբ գրանցված գումարների ակտը. տվյալ դեպքում վերադարձի կտրոն չի տպվում.

7) կազմակերպությունները, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ՝ յուրաքանչյուր ՀԴՄ-ի համար իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ համաձայն N 7 ձևի.»::

Քննարկվող դեպքում Ա/Ձ Արման Մարզեցյանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգը, քանի որ սխալմամբ մուտքագրված գումարի գրանցման մասին տեղեկացել է միայն ամիսներ անց՝ ՀԴՄ-ի հետ կապված անսարքությունը վերանորոգելուց հետո:

Մինևույն ժամանակ, Ա/Ձ Արման Մարզեցյանի կողմից 40.002.098 դրամ գումարը սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում հետևյալ հանգամանքները: Մասնավորապես, 2014թ-ին Ա/Ձ Արման Մարզեցյանի իրացման շրջանառությունը կազմել է 4.300.000 դրամ, 2015թ-ին՝ 4.217.340 դրամ, 2016թ. առաջին կիսամյակում՝ 2.950.000 դրամ: Միջին ամսեկան շրջանառությունը կազմում է 400.000 դրամից մինչև 450.000 դրամ:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Արման Մարզեցյանի կողմից 40.002.098 դրամը ՀԴՄ է մուտքագրվել թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է, հետևապես սխալմամբ մուտքագրված գումարի մասին ուշ տեղեկանալը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով այդ մասին արձագանքելու ժամկետի բաց թողնվելը, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ այդ գումարը Ա/Ձ Արման Մարզեցյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով նույնաբովանդակ գանգատների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից արտահայտած դիրքորոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ սույն գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ա/Ձ Արման Մարզեցյանի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ